

3725-3732

017.4

7-13



017.4

ԿՐԹԱԿԱՆ - ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Ս. Գ Ա Ի Թ Ե Ա Ն Ի



# Յ Ա Յ Տ Ա Գ Ի Ր



Ե. Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

1901



Կ. Պ Ո Ւ Ի Ս

Տ Պ Ա Գ Ր. Ս Ա Ր Ը Ե Ա Ն Ե Ա Ը Ն Կ.


Պատր Ալի ճաստոի, Թիւ. 38

9593

9441188118

1001

9. 7328.57



1001

## ՅԱՅՏԱԳԻՐ - ԳՐԱՑՈՒՑԱԿ

### Գ Ա Ի Թ Ե Ա Ն Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ա Լ Ո Ի Թ Ե Ա Ն

ՀԻՄՆՈՒԱԾ 1892 ԻՆ

1. Կր յօրինէ եւ կր հրատարակէ դասագիրքեր .
2. Կր հայրայթէ վարժարաններու համար պէժ եղած գիրքերն ու պիտոյ՛ր .
3. Պոլսոյ եւ գաւառներու դպրոցներուն համար դպրոցական պատճօնեաներ կ'ընտրէ եւ կր դրկէ .
4. Կր հրատարակէ նաեւ ուրիշ Հեղինակներու պատրաստած օգտակար գրքեր .
5. Կր կատարէ ամէն տեսակ սպագրական եւ յարակից գործեր :

### Ն Պ Ա Տ Ա Կ

*Սատարել ազգային կրթութեան գործին .*

### Ս Կ Ջ Բ Ո Ւ Ն Ք

*Ուրիշներու օգտին սեղ փնտռել իր շահը .*

### Ա Ռ Ա Ջ Ի Ն Ե Ի Գ Լ Խ Ա Ի Ո Ր Պ Ա Յ Մ Ա Ն

*Կանխիկ գործել :*

# I. ԴԱՍԱԳԻՐՔԵՐ

Դասրեան Գործակաշարեան Հիմնադիր Տնօրէնը, 1880-էն մինչեւ 1891, Պոչսոյ եւ Գաւառներու մէջ վարած ըրրաշով Ուսուցչական եւ Տեսչական պաշտօններ, եւ անձամբ զգացած ըրրաշով կրթական արդի պահանջուածներուն համաձայնի դասագիրքեր յօրինելու պէտք՝ մասնաւոր զբաղուել ընտրած եւ աշխատիչ այս նպատակին համար, եւ 1887-ին առաջին անգամ ըրրաշով Տանկախօս Հայերու համար հրատարակած եւ Հայ Լեզուի Դասընթացքը որ կը բաղկանայ երեք մասերէ: Ապա՝ փորձառութեան վրայ հիմնուելով շարունակած եւ իր ջանքերը նոյն ուղղութեամբ, եւ այսօր երեսունէ աւելի դասական գրքեր հրատարակած եւ, որոնք են.

**1. ԱՌԱՋԻՆ Վ.Ա.ԲՃՈՒԹԻՒՆ ՄԱՆ. ԿԱՆՑ.**

Եօթերորդ Տպագր. 1898, էջ 112: — Առաջին գիրք Տանկախօս տղոց. պարզ եւ դիւրին կերպով կ'աւանդէ բառեր, որոնցմով մանուկը կը վարժուի կազմել խօսքեր: Փոխադարձ Թարգմանութիւններով, բառերու վրայ այլ եւ այլ կրթութիւններով, մտամարզական եւ իրագիտական հրահանգներով, մանկական ոտանաւորներով՝ առանց ձանձրանալու՝ մանուկը կ'ուսանի ընթերցանութիւն, Թարգմանութիւն, տարրական գիտելիք լեզուի: — Քանի մը ամսուան մէջ տղեկը կը սկսի Հայերէն խօսիլ: Այս է արդէն զբոսկին նպատակը: Զեռք բերուած արդիւնքը իրական եւ վաւերական է, Ուսուցիչներու վկայութեամբ եւ վիճակագրութեամբ:

**4 Դահ.**

**2. ԵՐԿՐՈՐԴ Վ.Ա.ԲՃՈՒԹԻՒՆ ՄԱՆ. ԿԱՆՑ.**

Վեցեր. Տպ. 1901, էջ 208: — Այս Բ. մա-

սին մէջ է որ կը փայլին մեծոտին առաւելութիւնները. տղոց մտքին համապատասխան նիւթերով ընթերցանութեան կը վարժեցընէ, միանգամայն իրագիտութեան, մտամարզութեան և այլ կարեւոր գիտելիքներու, բարոյական սկզբունքներու կ'ընտելացընէ. լեզուին հետ կը կրթէ նաև միտքն ու սիրտը : — Ամէն էջի ներքև կը գտնէք հրահանգներ որոնց մէջ է մեծոտին գաղտնիքը : Հաստատ գիտցէ՛ք որ, եթէ այդ հրահանգները պէտք եղած խնամով կատարել Տաճկաստանի մանուկը ՀԻՄՆԱՊԷՍ ստրված պիտի ըլլայ Հայերէն կարդալ, հասկնալ, խօսիլ եւ նոյն իսկ շարադրել :

Տ Գ ա հ.

**Յ. ԵՐՐՈՐԴ ՎԱՐՃՈՒԹԻՒՆ ՄԱՆԿԱՆՑ.** Հինգերորդ Տպ. 1900, էջ 208 : — Այս Գ. Մասը, իբրև ընթերցանութեան գիրք, անբաղդատելի առաւելութիւններ կ'ընծայէ : Եւ նախ, կարեւոր է գիտնալ թէ Երրորդ Վարժուքիւնն ընդունուած և մեծապէս օգտակար եղած է որչափ տանկաստանային հայաստանի գաւառներու և Պոլսոյ լաւագոյն դպրոցներուն մէջ : Կը պարունակէ՝ բարոյագիտական, իրագիտական, մտամարզական և այլ պիտանի նիւթեր՝ ընթերցանութեան համար : Պարզ Ընթերցարան մը չէ այս գիրքը, և աշակերտը զայն չպիտի կարդայ մեքենական կերպով, հապա՛ հմտալից նիւթերուն խմատին պիտի թափանցէ, և գիտակցաբար պիտի առաջդիմէ՝ ստանալով մտքի և սրտի մշակութիւն, խմացական կարողութեանց զարգացում և բազմակողմանի հմտութիւն՝ գործնական և կարեւոր գիտելիքներու վրայ. Քերականութիւն, Մտամարզութիւն, Իրագիտութիւն, Քաղաքացիական Կրթութիւն, և այլն, և այլն : Պիտի կատարէ մտաւոր, գրաւոր և բերանացի մարզանքներ՝ լեզուի և

մտածութեան, բառակազմութեան, հոմանիշներու, հականիշներու, նմանաձայններու վրայ, ինչպէս և վերլուծութիւն իմաստի, ոճի, և այլն: **5 Դաս.**

**4. ՏԱՐԲԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ, Հիւնգերրորդ Տպ. 1899, էջ 48.** — Նախնական կարգերու դիւրին և գործնական եղանակով կ'աւանդէ Հայ լեզուին հիմնական օրէնքները և կը կանոնաւորէ աշակերտին լեզուն:

Լաւագոյն մեծոտով օժտուած այս գրքոյկը մեծագոյն բազայերութեան և հմուտ մասնագէտներու գնահատման արժանացած և քիչ ատենի մէջ տարակազ հազարներով սպառած է: **2 Դաս.**

**5. ԼՐԱՅՈՒՅԻՉ ԴԱՍԸՆԹԱՅԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ. Երկրորդ Տպ. 1896, կրկնակ էջ 114.** — Պէտք է կարդալ այս գրքին յառաջարանք ուր մանրամասն բացատրուած է Քերականութեան արուեստին նպատակը, մասնաւորապէս այս գրքին առաւելութիւնները և դասաւանդման եղանակը՝ որ շատ հրահանգիչ է: Ի՞նչ պէտք կայ աշակերտին գոց սորվեցընել Քերականական կանոններ. — հատուածներով ու գործնական կրթութիւններով կըրնանք լեզուին օրէնքներն ու սկզբունքները ուսուցանել. ա՛յս է ահա Լճացոռցիչին մէջ գործադրուած մեծօտը: Կը պարունակէ վերժանելի հատուածներ և անոնց անմիջապէս յաջորդող շահեկան հրահանգներու ճոխ մթերք մը: **3 Դաս.**

**6. ՓՈՒՆՋ, ՀԱՒԱՔԱԾՈՅ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՈՒԷ. Զորրորդ Տպ. 1897, էջ 96:** — Զուտ ազգային առակներ, երգեր, մանրամիտեր, բարոյական և գիտական հատուածներ, և այլն Ամէն նիւթի անմիջապէս կը յաջորդէ բարոյական առած մը որ կ'ամփոփէ նիւ-



Թի՛ն իմաստը: Հոգ տարուած է որ հատուածները՝ Թէ՛ իմաստի և Թէ՛ լեզուի կողմէ՛ յարմար ըլլան տղոց ըմբռնումին :

**3 Գահ.**

**7. ՓՆՋԱԿ, ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՒ ԽՈՇՈՐԱԳԻՐ,** Չորրորդ Տպ. 1899, էջ 48: — Արձակ և ոտանաւոր փոքրիկ հատուածներու վրայ մանուկները կը վարժին ընթերցանութեան և արտասանութեան, նիւթերն են շա՛տ պարզ և փոքրիկ տղոց ընտանի. լեզուն՝ նոյնպէս

**1 1/4 Գահ.**

**8. ԵՐԵՐՈՐԴ ՓՈՒՆՋ, ՀԱՒԱՔԱԾՈՅ ԱՇ-ԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒՒՆ, ԱՐՁԱԿ ԵՒ ՈՏԱՆԱԻՈՐ.** Երկր. Տպ. 1897, էջ 240: — Նախակրթարանի Դ — Զ. դասարաններուն համար պատրաստուած այս դասագիրքը կը պարունակէ ազգային գրիչներէ, ի՛նչպէս և օտար հեղինակներէ մեծ մասամբ անտիպ հատընտիր հատուածներ:

Նիւթերու ինամեալ ընտրութիւնը կը միտի մարզել դպրոցական սերունդին միտքը՝ օգտաշատ ծանօթութեանց մէջ, սիրտը՝ բարոյական սկզբունքներու և ազնիւ զգացումներու մէջ, նաշակը՝ գրական լեզուի մէջ:

Գրիչի մասնաւոր առաւելութիւնները. Անձնիւր հատուած ունի ստորև՝ բացատրելի բառեր, պիտանի գիտելիք, վարժութիւններ և հարցումներ՝ լեզուի, իմաստի, ոճի, քերականութեան, համաձայնութեան, շարադասութեան, բառակազմութեան, Հոմանիշ, Հականիշ, Նմանաձայն բառերու վրայ, և այլն: Ասոնք Դասատուին կատարելիք աշխատութեան նախագիծերն ու դասաւանդման ընդհանուր ուղղութիւնը ցոյց կուտան, և մեծապէս պիտի նպաստեն աշակերտներուն մտաւոր զարգացման և Հայ լեզուի նոխութեանց հրմտանալուն:

**6 Գահ.**

**9. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԸՆԹԱՑԻ ՇԱՐԱԿՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՎԱՅԵԼՉԱՐԱՆՈՒԹԵԱՆ .** Երրորդ Տպ. 1900, էջ 80 : — Ազգավարժարաններու մէջ շարադրութեան և նամակագրութեան դասերը աստիճանաւոր ընթացքով աւանդելու կարեւորութիւնը անժխտելի է . Հայերէնի ուսուցիչները անշուշտ պէտք զգացած են դասագրքի մը որ դիւրին և հիմնապէս ուսուցանէ շարադրելու արուեստը : Փորձով հաստատուեցաւ թէ այդ պէտքը լիուրի կը գոհացընէ Գործն. Ընթացքի Շարադրութեան եւ Վաշեղաբանութեան անուն գիրքը :

Բնական գերընտիր ոճ, աստիճանական քաշխուռ և դասաւորում, մաքուր ու սահուն շեզու, շահեկան նիւթեր, շարադրութեան հիմնական օրէնքներ, վաշեղաբանական գիւտեր, հարցեր, կրթութիւններ, օրինակներ, նկարագրութիւններ, նախադասութեանց կազմութեան հրահանգներ, և այլն : **3 Դառ.**

**10. ԲԱՆԱԼԻ ՇԱՐԱԿՐՈՒԹԵԱՆ . Բ.** Տպագր. 1899, էջ 80 : — Կը պարունակէ դասաւանդման եղանակը, հրահանգներուն և շարադրելի նիւթերուն ընդլայնումը, որմէ կրնան օգտուիլ ուսուցիչներ և առանձին ուսանողներ : **7 Դառ.**

**11. ԸՆՏԵԼԱՐԱՆ ՀԱՅ ԼԵՋՈՒԻ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՒ ԽՈՇՈՐԱԳԻՐ,** Առաջին գիւրքի ալբոմներէն էսֆր. Երրորդ Տպ. 1899, էջ 64 : — Բոլորովին նոր մեթոտով մը փոքրիկ մանուկները կը վարժին ընթերցանութեան . — առարկաներ և էակներ, կենդանի և բոյս, գործիք և պիտոյք խումբ խումբ կը ներկայանան աշակերտին որ այդ դասաւորութեամբ որոշ և ամփոփ զաղափար կ'ունենայ իրեն մօտ և ամենէն կարեւոր բաներուն վրայ, որոնց թիւը հետզհետէ կրնայ

աւելնալ՝ քանի լայննայ իր միտքը : Հարցումներու  
 շնորհիւ , իր ծանօթութիւնները կ'ընդարձակին՝ առար-  
 կաներու գործածութեան , յօրինման և այլ հանգամանք-  
 ներուն վրայ : **2 Դահ.**

**12. ԱԿՋԲՈՒՆՔ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹՅԱՆ  
 ՆԻ ՇԱՐԱԳԱՍՈՒԹՅԱՆ.** Բ. Տպ. (մասնուշի  
 սակ) : — Գործնականէն տեսականը՝ այսինքն հաս-  
 ուածներէն կանոնները հետեւցընելու մեթոտով՝ աշա-  
 կերտը ընդհանուր վերաքաղ մը կ'ընէ Քերականու-  
 թեան , և հիմնապէս կ'ըմբռնէ բառերու պաշտօնն ու  
 կիրառութեան եղանակը . մեծագոյն սաստարն է քերա-  
 կանական շրջանէն գրագիտական շրջանը թեւակոխե-  
 լու , զարգացընելով՝ խօսելու , մտածելու և տրամա-  
 բանելու կարողութիւնները : Գրքին յօրինուածքն ա՛յն-  
 բան հրապուրիչ , ա՛յնքան գիւրին է որ Պատ. Ռուսու-  
 ցիչները բնաւ դժուարութիւն չպիտի ունենան մէթոտին  
 թափանցելու և մէկ ակնարկով պիտի ըմբռնեն իրենց  
 դասը հաճելի ընծայելու գաղանխքը : **3 Դահ**

**13. NOUVELLE METHODE  
 ALPHABET FRANÇAIS.** Գործ ՏԻ-  
 ԿԻՆ ՍԱԹԻՆԻԿ ՏԷՐ ԲԱՐԹՈՂԻ (Ծնեալ Հաշեպուսն)  
 Երկրորդ Տպ. 1898, էջ 48 : — Մանկապարտէզներու և  
 Տարրական Նախակրթարաններու մէջ Գաղղիերէնի ուս-  
 ման համար յարմարագոյն դասագիրքն է՝ բոլորովին  
 նոր և ինքնագիւտ մէթոտով մը յօրինուած . մանկա-  
 պարտէզ յաճախող փոքրիկները կրնան՝ առանց նոյն  
 խակ Գաղղ. այբուրէնը սամբողջ ստոված ըլլալու՝ առա-  
 ջին օրէն նշանակիչ բառեր հեզել , կարդալ , թարգմա-  
 նել և խօսելու վարժիլ : **2 Դահ.**

**14. ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԹԱՑԻ ԿԹՆԻ  
 ՈՒՍՄԱՆ** Երրորդ Տպ. 1900, էջ 96 : — Հին և

Նոր կտակարաններու և Հայ առաքելական եկեղեցիի վարդապետութեան համաձայն յօրինուած. Գործ ՎԱՐԴԱՆ ՔԱՂ. ԱՍԼԱՆԵԱՆԻ, կրօնական գիտելիքները դիւրամբունելի և պարզ ոճով կ'աւանդէ՝ առանց զբաղեցընելու մանրամասնութիւններով ևւ տղոց մտքէն բարձր նիւթերով :

Այս երկն ալ իր ուղղութեան և պարզ լեզուին համար գտած է արժանաւոր ընդունելութիւնը յօգուտ մանուկ աշակերտներու բարոյական-կրօնական դաստիարակութեան, որ մեծագոյն խնամքի կարօտ է: **2 Դահ.**

**15. ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՅՐԱԵՆԱՐԱՆ**

Երրորդ Տպ. 1900, էջ 32. — Աշակերտը Պնակի կամ Շարժական Տառերու վրայ այբուբենը ճանչնալէ ետքը, այս առաջին գրքոյկի մէջ կը վարժի հեզելու՝ նշանակիչ բառեր և ապա դիւրին խօսքեր՝ առանց ճանճրանալու:

Հասար 20 փր.

100ր 25 Դահ.

**16. ՅԱՅՏԱԳԻՐ** Դաւթեան Գործակալութեան.

Հինգերորդ Տպ. 1901, էջ 32 : = Ուր պարզուած է Սմբատ Դաւթեանի հիմնած Գործակալութեան վրայ շահեկան տեղեկութիւններ, գործելու պայմաններն ու եղանակը, ևայլն :

**2 Դահ.**

**17. ԾԱՂԿԱՔԱՂ, ՀԱԻԱՔԱԾՈՅ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԷ, ԱՐՁԱԿ ԵՒ ՈՏԱՆԱԻՈՐ . Բ. Տպագր.**

1901, էջ 144. = Նոր և ընտիր կտորներ, զուտ աշխարհարար, որոնք մեծապէս կը նպաստեն նախնական կարգերու մէջ լեզուի մշակութեան :

**4 Դահ.**

**18. Emerson E. White, A. M. LL. D. ԴՊՐՈՑԱՎԱՐՈՒԹԻՒՆ, Մ. Մ. Գասապեան** 1897, էջ 96.

կը բացատրէ դաստիարակչին դերը և դպրոց մը վարելու կարեւոր միջոցները, պայմանները և վախ-

ճանները՝ դիւրըմբռնելի և սահուն ոճով մը : Ամէն Ռուսացի համար պիտանի գիրք մ'է, կը դիւրացընէ դպրոց կառավարելու և տնօրինելու եղանակը, որ հմտութենէ զատ կը պահանջէ փորձառութիւն և վարչական տաղանդ : Քանի՛ քանի՛ ռուսացիչներ այս հանգամանքները լաւ ուսումնասիրած չըլլալով՝ թէ՛ իրենք տուժած են և թէ՛ իրենց թափած Տիգն ապարդիւն մնացած է ի վնաս մատաղ մանուկներուն : Դպրոցավարութիւնը կը թելադրէ դասատուին՝ թէ ի՞նչպէս վարժեցընելու է տղաքը ինքնավարութեան, կարգապահութեան և աշխատասիրութեան . միանգամայն իրեն՝ ռուսացիին ալ կը ներշնչէ ճարտարութիւն, սրտի ու կամքի ուժ, դրական ու բարոյական նկարագիր որմէ պիտի ազդուին տղաքը : Ռուսացիչներ, գնեցէք այս գիրքը եթէ կ'ուզէք յաջողիլ ձեր սապարէզին մէջ : **5 Գրահ.**

**19. ԱՌԱՃԱՊԱՏՈՒՄ, Զ. Պ. 5. Գրահ.**

**20. ՀԱՄԱՌՕՏ ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ,**  
Ա. Տպագր. 1897 էջ 64. պատրաստեց Ա. Հարէլեան, ազգ. դպրոցներու միջին շրջաններուն համար : Կրօնագիտութիւնը պարզ եղանակով մը կ'ուսուցանէ՝ բացատրելով եկեղեցիին աւագ տօները և 7 խորհուրդները կամ պաշտամունքը, նուիրապետական կարգերը, բրիտանիական ժողովներն ու աղանդները և մասնաւորապէս Հայ. Ս. և Առաքելական եկեղեցիին ծէսերն ու կարգերը : **3 Գր.**

**21. ՄՐՏԻՍ ՉԱՅՆԸ, Գերթուածներ. 5 Գր.**

**22. ՆՈՒԷՐ ՀԱՅ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ,**  
ՍՄԲԱՏ ԴԱԹԵԱՆԻ, զուտ աշխարհաբարով գրուած ոտանաւորներու առաջին գիրքն է՝ բազայարմար Մանկապարտէզներու և Նախակրթարաններու : Այս գրքէն 1000 օրինակ նուիրուած է որբերուն : **1 1/2 Գրահ.**

**23. ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒ-**

**ԹԻԻՆ,** Ա. Տպագր. 1898, էջ 72. Տըլամպէռ Մարքիզուհիին խրատները . Թարգմ. Յուսիկ Ծ. Վ. == Իզական սեռի սիրելագոյն զիրքն է, ամենուն մատչելի նիւթով, լեզուով, գնով : **3 Դահ.**

**24. Անգղիացի նշանաւոր խմատասէր - բնախօս Հքովի գործը, ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՎՐԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՍԵՐ,** գիտական աշխարհին մէջ ծանօթ երկ մ'է որ մեծապէս սատարած է գիտութիւնը ռամկացընելու, ժողովրդին մատչելի ընելու : Նոյն զիրքը՝ հետեւողութեամբ հայացուցած է մեր աշխատակից Գ. Անգրէասեան : Իր այս աշխատասիրութիւնը պատրաստուած է ուղղակի ժողովրդին միտքը լուսաւորելու՝ գիտական հիմերու վրայ : Ամէն ատօժանի մտային կարողութիւն ունեցող մարդ կրնայ դիւրաւ ըմբռնել զրքին մէջի ջղուտ տրամաբանութիւնը : Յաճախ կը գանգատինք թէ գիտական ուսումներու քիչ տեղ ու կարևորութիւն կը տրուի մեր դպրոցներուն մէջ . անագրքոյկ մը որ տեղ չի թողուր այդ գանգատներուն, և կ'արժէ որ դպրոցի տղաք, ինչպէս ամէն կարդալ գիտցող մարդիկ անհրաժեշտ կերպով ունենան և ուսումնասիրեն այս զիրքը, և անոր աւանդած գիտական ծանօթութիւնները աղէկ սորվին : Ա. Տպագր. 1897, էջ 112. : **5 Դահ.**

**25. ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒ-**  
**ԹԻՒՆ,** Ա. Տպագր. 1899, էջ 80 . Երկրորդ խրատական զիրքն է զոր Յուսիկ Ծ. Վ. կ'ընծայէ Հայ մատաղ սերունդին, որուն տրուած ուսումն ու լեզուական ու գիտական հմտութիւնը թերի պիտի մնային, եթէ մասնաւոր հոգածութեան առարկայ չընէինք սրտի և հոգիի մշակութիւնը, բարեկրթութեան, մարդավարու-

Թեան և կենցաղագիտութեան սկզբունքները ճերշտեց-  
ինք : Այս է ահա զբրուկին նպատակը, որ շատ կարեւոր հրահանգներ կը պարունակէ պատանի և երիտասարդ հասակի համար :


Հայր մը կամ մայր մը ի՞նչպէս կրթելու է իր զաւակը, ի՞նչ ուղղութիւն տալու է անոր գաղափարներուն, վարք ու բարքին, նիստ ու կացին, ուրիշներու հետ կենցաղաւարութեան, և ընդհանրապէս սպրելու պայմաններուն . ստոնք ամէնը պարզ ու հասկնալի ոճով մը բացատրուած են այս փոքրիկ գրքին մէջ : **ՅԴան.**

**ՉԵ. ԲԻՒՐԱԿՆ ՇԱՐԱԹԱԹՆԵՐԹ.** Երագիր . = Տոհմային գրականութիւն . Բանասիրական, Լեզուագիտական, Ազգագրական նիւթեր, Գալտոցական Մատենագրութիւն, մասնաւոր Ուսումնասիրութիւններ Հայ նշանաւոր գրագէտներու և գիտուններու վրայ : Ընկերային և իմաստասիրական նիւթեր, տնտեսական նիւթեր, մատենասիտութիւն՝ նոր և ամէն տեղ լոյս տեսած բոլոր Հայերէն գրքերուն վրայ : Օտար մատենագրութեան վրայ լրացուցիչ ծանօթութիւններ : Գաղափարային վէպեր՝ առնուած մեր կեանքէն : Ազգային, Քաղաքական, Ուսումնական և Գիտական խիստ կարեւոր լուրեր : Այս ծրագրով Բիւրակներ միակ շարանածերքն է իր տեսակին մէջ : 1898, 1899 և 1900ի Բիւրակներուն մէջ հրատարակեցինք ազգագրական, ռամկագիտական և լեզուաբանական նիւթեր և զուտական բառեր, որոնք մեծ կարեւորութիւն ունին բնատոհմիկ գրականութեան համար և ուսումնասիրութեան առատ նիւթ կը հայթայթեն անոնց որ կը մշակեն բուն ժողովրդական գրականութիւնն ու կը պրպտեն ազգագրական ճիւղին ծարուն գանձերը : Ամէն Հայ անհատի ընդհանուր զարգացման և գրական ծարուին գոհագում կուտայ :

1898ի Բիւրակներ կազմուած կ'արժէ	2	Լիւրա
1899ի » » » » »	1	»
1900ի » » » » »	1/2	»

**27 . ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ** Օսմանեան  
Կայսրութեան , Դ. Խաչկունց , 1898 , էջ 79 : Տարրա-  
կան Նախակրթարանի բարձրագոյն դասընթացքին հա-  
մապատասխանող այս դասագիրքը կը բովանդակէ Օսմ.  
պետութեան զանազան մասերը՝ ընդլայնուած , ըստ նոր  
Կրթական Մրագրի Ամէն մարդ պէտք ունի ճանչնալու  
այն երկիրը ուր ծնած է ու կ'ապրի , և ո՛րքան լաւ  
ճանչնայ զայն , այնքան աւելի կ'օգտուի իր առօրեայ  
գործառնութիւններէն : Անհրաժեշտ է որ դպրոցներու  
մէջ մասնաւոր խնամով ուսուցանենք Օսմ. աշխարհա-  
գրութիւնը : Ի՞նչ կ'արժէ տարիներով պարսպիլ հեռա-  
ւոր երկիրներու ուսումնասիրութեան , երբ մեր երկիրը՝  
մեր միջավայրը լաւ չենք ճանչնար : Մենք՝ այս ըն-  
դարձակ ու գեղեցիկ երկրին ժողովուրդը , մենք այս  
մեծ ու փառայեղ պետութեան հաւատարիմ հպատակ-  
ները , պէտք է որ մենք մեզ լա՛ւ ճանչնանք , մեր  
չքնաղ երկրին քաղաքական , վարչական , տնտե-  
սական , արհեստական և այլ կարգի հանգամանքնե-  
րուն տեղեակ ու գիտակ ըլլանք : Ինքնաճանաչութիւ-  
նը ա՛յնքան օգտակար է , որքան մեր մօտն ու հեռուն  
գտնուող ազգերուն ու ժողովուրդներուն կեանքը հե-  
տազօտել , անոնց երկիրն ու քաղաքակրթութիւնը , քա-  
ղաքական և վարչական դրութիւնները քննել և ուսա-  
նիլ , և Աշխարհագրութեան այս դասագիրքն ալ պատրաս-  
տել Թելադրեցինք ճիշդ այս նպատակով որ մեր ուսա-  
նողները դպրոցական շրջանէն իսկ սորվին իրենց բնա-  
վայրին աշխարհագրութիւնը :



 Օսմ. Աշխարհագրութեան այս առաջին ձեռնարկը կրնայ վրիպակներէ և անճշդութիւններէ զերծ չըլլալ. բնական է որ յաջորդ տպագրութեան առթիւ պիտի բարեփոխուի այդ ամէնը : Ուստի, ընդհանրապէս զաւառացի բոլոր ուսուցիչներուն խորհուրդ կու տանք ուժ տալ Տեղագրական ուսման և իրենց գըտնուած քսղաքը, գիւղը լաւ ուսումնասիրեն՝ բաղդատելով այս գրքին հետ, և մեզի դրկեն իրենց ուսումնասիրութիւնները՝ ըստ այնմ ճշդելու և ամբողջացընելու համար ինչ որ թերի է ստոր մէջ : Այս ուսումնասիրութեան համար լաւագոյն առաջնորդ կրնայ ըլլալ Բիւրակնի 1899ի, 45 Թիւին մէջ հրատարակուած Տեղեկագրական Ուսումնասիրութեան Ծրագիրը, զոր պատրաստ ենք դրկել ամէն անոնց՝ որ պէտք ու փափաք յայտնեն :

**28. ԳԵՐԹՈՒՄՆԵՐ, Յ. Ե. 5 Դահ.**

**29. ՏՂՈՅ ԿՐԾՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ, Հեղինակ Մկրտիչ Ծ. Վ. Աղաւնունի :** 4 Դահ.

**30. ԹՈՒՄԲ. ՄԵԳՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ,** Վաճառականներու, գրագիրներու, առուտուրով զբաղող ամէն անհատի, ինչպէս և դպրոցականներու կ'ուսուցանէ Թուրքական խնդիրները դիւրին ու գործնական կերպով լուծել : 5 Դահ.

**31. ԱՌԱՋՆՈՐԳ ԱՆԳՂ. ԼԵԶՈՒԻ,** Յ. Վ. = Անգղ. լեզուն դիւրին եղանակով՝ նոյն խակ առանց դասատուի ուսուցանելու ամենէն յարմար գիրքն է : Կը պարունակէ ընթերցման կանոններ, քերականական սկզբունքներ, հրահանգներ, խօսակցութեան վարժութիւններ, հատուածներ, և այլն : 5 Դահ.

**32. ԻՎԱՆՃԷԼԻՆ, Վէպ Լոնկֆէլտի, Թարգմ.**

Տ. 1. [Իբրև Թերթօն հրատարակուած Բիւրակնի մէջ] : Ամէն մարդ՝ բարոյականի մասին ամէնէն բծախնդիրն անգամ՝ վստահութեամբ կրնայ կարդալ տալ իր աղջիկ Թէ մանչ զաւկին իբրև բարոյացուցիչ վէպ : **Տ Դ. հ.**

**33. ՕՍՄ . ՏԱՂԱԶԱՓՈՒԹԻՒՆ** ( Իշմի Արուզ ) Գործ Ս. Յ. Կուրաթիկեանի . [ Տաճկարան ուսուցիչ և անդամ Ռուսմասկան Խորհրդոյ Ազգ. Կեդր. Վարչութեան ] : Բանասէրներու , Օամ. լեզուն սիրողներու և ուսանողներու համար անհրաժեշտ գիրք մ'է : արատապուած Բիւրակն էն : **Տ Դ. ա. հ.**

**34. ՆՈՐ ԴՊՐՈՅ , ՆԱԽԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂԶ ԴԱՍԸՆԹԱՅՔ ՀԱՄԱԿԵԴՐՈՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ ,** Պատկերազարդ գիրք Տարրական Նախակրթարանի ուսանողներու համար : Այս ձեռնարկին մէջ ուսման բոլոր առարկաները մշակուած և դասերու բաժնուած ըլլալով՝ անոր շնորհիւ կարելի պիտի ըլլայ Ազգ. դպրոցներու մէջ միօրինակ ժամանակացոյց ու Ծրագիր գործադրել : Սկզբունքն է միակ դասարան, միակ դասատու և միակ դասագիրք : Ամբողջ գործը կը բաղկանայ 10 Պրակներէ : [Դպրոցական տարին 10 ամիս հաշուելով՝ մէն մի ամսուան համար աշակերտը պիտի ունենայ միակ Պրակ մը որուն մէջ ամփոփուած են իր ուսանելիք բոլոր ճիւղերը . Բարոյագիտութիւն , Քաղաք. Կրթութիւն , Պատմութիւն , Աշխարհագրութիւն , Թուարանութիւն , Գիտութիւններ և Մայրենի լեզու :

Ամէն դպրոցականի անհրաժեշտ գիրքն է , որով շատ մը հատորներ գործածելու անպատեհութիւններէն պիտի ազատի :

Մէկ օրինակի (կամ 10 Պրակի) բաժանորդագինն է մինչև Սեպտ. **25 Դ. ր. հ.**

Արտատանմանի համար = Տ ֆր. (3 բուպլ) :

Տասը օրինակի բաժանորդագին ( 250 դրշ. կամ 80 ֆր . կամ 30 ռուպլի ) մէկէն վճարողը 1 ձեռք, այն է 10 Պրակ նուէր կը ստանայ :

Պրակ առ Պրակ կը վաճառուի **5 Դահ.**

**35. ՇՐՋԱՌՆԲԱԿԱՆ.ԾԱՆՈՒՅԱԳԻՐ**

«ՆՈՐ ԴՊՐՈՅ»ի, ուղղուած կրթական մարմիններու, Տեսուչներու, Ուսուցիչներու և Դպրոցի բարեկամներու կը պարզէ ՆՈՐ ԴՊՐՈՅի պայմանները, ուղղութիւնն ու ընթացքը, օգտակար Թելադրութիւններ ընելով ուսուցիչներուն, որոնք փասիաք ունին զարգացման և հետամուտ են ուսումնասիրելու կրթական նոր սկզբունքներն ու համակերպոն դրութիւնը : **5. Դահ.**

**36. ԼԻԱԿԱՑԱՐ ԳՐԱՅՈՒՅԱԿ** Հայերէն

ամէն տեսակ հրատարակութեանց՝ նիւթի և տեսակներու բաժանումով ( մաւնուշի ջակ ) :

**37.**

**38.**

**39.**

**40.**

Դարբեանի հրատարակութիւնները շարունակելի են :



Ս. ԴԱԻՅԵԱՆԻ աշխատասիրութիւնները ո՛չ միայն վաւերացուած են Ուսումն. Խորհուրդէն, այլ և կեդր. Վարչութեան կողմէ յանձնարարեալ դասագրքերու ցանկին և Մէարիֆի պաշտօնական Դրացուցակին մէջ նշանակուած են :

Նաև Ազգ. պաշտօնական մարմիններ, կրթական վարչութիւններ և առհասարակ ամէն ձեռնհաս Ուսուցիչներ Պոլսէն Թէ գաւառներէն դրկած են՝ իրենց փորձ-

առուժեան վրայ յենլով՝ գնահատական նամակներ, վերոյիշեալ դասագրքերու օգտակարութեան և արդիւնաւորութեան մասին :

Լրագիրներ և պարբերական Հանդէսներ ալ ժամանակ ժամանակ նուիրեցին իրենց էջերը՝ քննելու, դատելու և գնահատելու այս աշխատութիւնները :

## 2. ՀԱՅԹԱՅԹՈՒՄ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒ

Դաւթեան Գործակալութիւնը կը կատարէ յանձնարարութիւններ ամէն Տեսակ և՛ ամէն շեզուով գրքերու, ինչպէս և դպրոցական ու դասական պիտոյքներու : Կը հայթայթէ Մանկապարտէզի նիւթեր, աշխարհացոյց քարտէսներ, բնագիտական՝ բնապատմական գործիքներ, ձեռագործի նիւթեր, ձեռագիտութեան և ստեղծագործի առարկաներ, եւ այլն : Կը յանձանձէ՝ իր հրատարակած գրքերէն զատ՝ բոլոր հեղինակներու գործերը, Պոլիս, Տիֆլիս, Երուսաղէմ, Վիէննա, Վենետիկ, Իզմիր, Բարիզ և ուրիշ տեղեր տպուած ամէն տեսակ Գրքեր, Լրագիրներ, Հանդէսներ և որ ի կարգին : Դիւրութիւններ կ'ընծայէ վարժարաններու՝ Մատենադարաններ կազմելու, որպէս զի ուսանող մանուկներն իրենց առօրեայ դասերէն դուրս գրքեր ալ գտնեն կարդալու, իբրև ամբողջացուցիչ մաս կրթութեան : (Տե՛ս Բիւրակն 1900, Հոկտ. 31, Թիւ 40) :

**Յանձնարարութեանց առթիւ ու՛ց դնել առ կէտերուն .**

1. Յանձնարարութեանց արժէքը կանխիկ զրկուելու է գէթ մտաւոր հաշուով :

2. Յանձնարարուած գրքերուն քանակութիւնը , տեսակը , հեղինակին և ի հարկին տպարանին անունները՝ ինչպէս և քանիերորդ տպագրութիւն ըլլալը որոշ գրուելու է :

Ծան. — Կարելի է սակայն այս ծանօթութիւնները չտալ և ընտրութիւնը մեր կամքին թողուլ՝ միայն նշանակելով թէ ո՛ր դասարանի համար և ի՞նչ ճիւղի գիրք է պէտք եղածը :

3. Որոշակի գրել թէ որո՞ւ հասցէին ղրկուելու են , և ի՞նչ միջոցով (փոսթով թէ սնտուկով) և ո՞ր ճամբով :

4. Երրորդ անձի մը միջոցաւ գիրք ապապրելէ աւելի լաւ է ուղղակի մեզի գրել , որով սխալ գիրք չի ղրկուիր և աւելի զեղչ կը տրուի վարժարանին :

5. Օսմ. ոսկին 108, մէճիտը 20, ֆրանքը 4,30 դշ.ի հաշուով կ'առնուին :

6. Մեզի դրամ ղրկել կարելի է՝ կա՛մ դրամածրարով , կա՛մ մեր հրամանին վճարելի փոխանակագրով և կա՛մ ապահովագրուած նամակին ներփակելով փոսթի փուլ , եթէ մինչև 100 դրուշի ապապրանք է :

100 հատ փուլը 100 դրուշի հաշուով կ'ընդունուի , այսինքն մէճիտիցէն 19 էն՝ փոքրաքանակ յանձնարարութեանց համար :

Իսկ օտար (ոչ-Օսմանեան) փուլերը հարիւրին 15 զեղչով կ'ընդունուին :

7. Եթէ փոխարժէքը կանխիկ ղրկուած չէ , յանձնարարութիւնը չկատարուելուն համար պատասխանատու չենք : Բայց ամէն կերպով պատասխանատու ենք և ամէն ջանք ու խնամք կը պարտինք յանձնարարութիւնն անյապաղ և ճշդիւ կատարելու , երբ փոխարժէքը կանխիկ է :

8. Մեր գրքերուն զեղչի սակն է միօրինակ  $\frac{0}{100}$  20.

— փոսթի, փոխադրութեան և մաքսի ծախքերը յանձնարարողին պատկանելով :


9. Հատով գնուած գրքերու վրայ զեղջ չի տրուիր :

10. Վաճառուած գիրքերը ետ չեն առնուիր :

11. Հաշիւներու մասին դիտողութիւններ լսելի են առարման Թուականէն մինչեւ երկու ամիս :

12. Կրթական ծրագրի և դասագիրքերու ընտրութեան մասին խորհրդակցութեան համար կրնայ մեզի գրուիլ :

Յանձնարարութիւնները կը կատարուին նշոյլ, խնամով, արագ :



### 3. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Ուսուցիչ դասին վիճակը օր ըստ օրէ բարելաւութեան հասցընելու պէտքը փաստաբանել աւելորդ է : Յաճախ արժանաւորներ կը մնան մութի մէջ, առանց բազալերութեան, նոյն իսկ առանց պաշտօնի և սարուստի միջոցներու, մինչդեռ ուրիշներ՝ գուցէ նուազ արժանաւորներ՝ շնորհուկով, կողմնակցութեամբ և այլ միջոցներով աւելի բազդաւոր կը գտնուին ապահովուած տեանելու գէթ իրենց նիւթականը : Մայրաքաղաքը և իր արուարձանները դիւրութիւն կրնան ունենալ իրենց ընտրութիւնն ընելու՝ ամէն անգամ որ դասատու ուզեն փոխել. բայց գաւառները : — Կը յիշուի թէ, մինչև մօտ ատեններ, գաւառներու կրթական վարիչները՝ ուսուցիչ գտնելու համար՝ կը դիմէին կա՛մ Ուսումն. Խորհուրդին, կա՛մ ո՛ր և է լրագրի վարչութեան և կա՛մ

Պոլսոյ մէջ իրենց ծանօթ անձի մը: Ասոնցմէ առաջինը իր շատ աւելի կարեւոր զբաղումներուն մէջ ի՞նչպէս ժամանակ գտնէ այս տեսակ գործերով զբաղելու: Լրագրի վարչութիւններ ի՞նչ պարտք ունին իրենց ժամանակն ու ուշը յատկացընելու այդ կարգի գործերուն, որոնք լրագրական շրջանակէն դուրս են: Իսկ մասնաւորներ, Թո՛ղ Թէ ձանձրոյթ ու բեռ կը նկատեն, այլ և ընտրութեան մէջ շատ անգամ սխալելու և խաբուելու ընդունակ են:

Վերջապէս, մէկ կողմէ պաշտօնեաները և միւս կողմէ պաշտօնէի պէտք ունեցողները բազմադիմի դժուարութիւններէ ազատելու համար, պէտք էր ԿԵԴՐՈՆ մը հաստատել ուր խնդրանք ու մատուցում զիրար գտնէին և անպաշտօն ուսուցիչներ եւ վարժուհիներ վատահոժեամբ ու արժանապատուութեամբ դիմէին՝ իրենց աստիճանին ու կարողութեան համապատասխան պաշտօն մը ձեռք բերելու համար:

Այս Կեդրոնն է ԴԱԻԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ: որ, առաջինն ու միակն ըլլալով իր տեսակին մէջ, տասը տարիէ ի վեր ամէն ջանք ի գործ կը դնէ՝ դիմագրաւելու այն դժուարութեանց որ անբաժան են ամէն զեղեցիկ զաղասիարի և ձեռնարկի առաջին քայլերէն:

Հոս քանի մը հարցում կը ներկայանայ մեզի.

1. Թէ մենք կարո՞ղ ենք այդպիսի գործ մը վարելու:
2. Թէ մեր ձեռնարկն օգտակար կրցա՞ծ է ըլլալ:
3. Թէ դեռ ի՞նչ միջոցներու պէտք կայ աւելի եւս արդիւնաւորելու այս հանրօտուտ ձեռնարկը:

Ահա երեք հարցեր որոնց պիտի ջանանք պատասխանել.

1. Իբրև նախկին աշակերտ բարձրագոյն վարժարանի մը, իբրև ուսուցիչ որ բաւական տարիներ Պո-

լիւ և զաւառները ջանացած է օգտակար ըլլալ կըրթական գործին . իբրև երկար տարիներ դպրոցական խնդիրներու, ինչպէս և զաւառական կեանքին հաւասարապէս հետամտած և փորձառութիւն ստացած մէկը, կը կարծենք թէ Գործակալութեան Վարիչը կատարելապէս ձեռնհաս ու ատակ է այսպիսի գործի մը :

2. Գործակալութեան հիմնադրութենէն (1892 Մայիսէն) ի վեր պաշտօնի դրկուած բազմաթիւ ուսուցիչներու մեծագոյն մասն երեք և աւելի տարիներ շարունակած են վարել իրենց պաշտօնը , — ինչ որ կ'ապացուցանէ թէ կատարուած ընտրութիւնները քաջայարմար եղած են՝ պաշտօնին , տեղին , քաղաքին և ուրիշ հանգամանքներուն :

Մեր փափարն ու ջանքն եղած է խնդրանքին լիուրի համապատասխան հանգամանքներ ու արժանիք ունեցող ուսուցիչներ առաջարկել . Ո՛չ միայն այսքան , այլ և մեր դիտումն եղած է ընտրել , հմտութեան հետ մէկտեղ , բարոյական նկարագիր կազմելու ընդունակութիւն ունեցող կրթական պաշտօնեաներ, որոնք զիտնան թէ ո՛ւր կը ձգտի բուն կրթութիւնը :

3. Տասը տարուան փորձով և մասնաւոր հոգածութեամբ, Գործակալութիւնը այսօր հասած է այնպիսի կազմակերպութեան մը որ՝ կրնանք ասպահովապէս ըսել թէ՛ տեւականութիւնն ապահովուած է և հանրութեան կը մնայ անոր ընծայել հարկ եղած քաջալերը : Վասն զի, Գործակալութիւնը , թէև անհատական ձեռնարկ մը , սակայն նկատի առնելով անոր հանրօգուտ նպատակը , արժան և արդար է որ նկատուի հանրային հաստատութիւն մը որ կը ձգտի օրէ օր , — իրեն ընծայուած աջակցութեան չափով — եւս քան զեւսօգտակար ու արդիւնաւոր ըլլալու : Եւ որովհետեւ



Ուսուցիչներո՛ւն առաւելապէս ձեռնտու և օգտակար ըլլալ կը նկրտի, ամէն աղգային Ուսուցչի շահը կը պահանջէ որ Գործակալութիւնն հետզհետէ աւելի բարգաւաճ ու զօրաւոր դիրք մ'ունենայ, և ինչ չափով որ իրենք սատարեն առ այս, ու կատարեն իրենց պարտականութիւնը, նոյն չափով և աւելի ալ պիտի կըրնան՝ իբրեւ իրենց իրաւունքը՝ փոխադարձաբար վայելել ամէն դիւրութիւն, ձեռնտուութիւն եւ նպաստ՝ իրենց նիւթական և բարոյական զարգացման համար:

Հետեւաբար, Դաւթեան Գործակալութիւնը կը փութայ ծանուցանել Մայրաքաղաքին ու Գաւառներու Թաղ. Խորհուրդներուն, Ուսումն. Խորհուրդներուն, Հոգարարձութեանց և ամէն Գպրոցական Վարչութեանց՝ Թէ պատրաստ է դրկել իրենց՝ դպրոցական պաշտօնեաներ — Տնօրէն, Մասնագէտ - դասատու, Դաստիարակ - ուսուցիչ, Վարժուհի —, Կազմական Կանոնադրի և առաջարկուելիք պայմաններու համեմատ:

Պէտք է որոշակի խնացընել Թէ ուզուած պաշտօնեան ի՞նչ աստիճանի վկայագիր, ի՞նչ ճիւղերու հրմտութիւն և ի՞նչ մասնաւոր հանգամանք ունենալու է, ի՞նչ պաշտօնի համար կ'ուզուի, ի՞նչքան Թոշակ կըրնայ վճարուիլ, և այլն, և այլն:

Պէտք է նաև դրկել ընտրելիին վճարելի առաջին ամսականն ու ճամբու ծախքը, և ի հարկին պայմանագիր կնքելու արտօնել Գործակալութիւնը:


Խնդրանքին և առաջարկեալ պայմաններուն համեմատ, Գործակալութիւնը ընտրելիներ կ'առաջարկէ՝ ըստ այնմ կատարելու համար վերջնական ընտրութիւնը:

Միւս կողմէ, Գործակալութիւնը Դասատուներուն կ'ընծայէ ամէն աշակցութիւն, կատարելով անոնց յանձնարարութիւնները: Անպաշտօն Ուսուցիչներուն և

Վարժուհիներուն կը հայթայթէ պաշտօն՝ իրենց կարողութեան և արժանիքին համեմատ :

Փորձը ցոյց տուած է թէ Գաւթեան Գործակալութիւնն, իբրև կեդրոն դպրոցական պաշտօնեաներու, օգտակար եղած է թէ՛ ուսուցիչ դասուն և թէ՛ Պոլսոյ ու Գաւառի Ազգ. դպրոցներուն՝ միջնորդելով անոնց յարաբերութեանց և ընձեռելով ամէն դիւրութիւն՝ մէկ կողմէ պաշտօն փնտորներուն և միւս կողմէ պաշտօնէի պէտք ունեցողներուն :

(Այս մասին կարդալ նաև Բիւրսիկն , 1900 , Թիւ 41 , էջ 653 ) :



## Ա Ր Զ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Պատճօն փնտորող Ռեսուցիչներ և Ռեսուցչուհիներ պարտին ունենալ Ռեսուցչութեան Վկայագիր , ըստ քամադրութեան Պետական և Ազգ. Օրէնքներու : Նաեւ կանխաւ Գործակալութեան հաղորդելու են իրենց Կենսագրութիւնն՝ որոշելով իրենց մասնագիտական նիւղերն ու պայմանները :


Պատ. Ռեսուցիչները կը հրաւիրուին արձանագրուիլ Գործակալութեան Տոմարին մէջ՝ հետեւեալ տեղեկութիւնները տալով . 1. Անուն և մականուն , 2. Տարիք , 3. Հայրենիք , 4. Ամուրի՞ քէ ամուսնացած , 5. Ո՞ր դպրոցէ ելած է և ո՞ր բուսականին , 6. Ի՞նչ նիւղերու հմուտ է , 7. Ի՞նչ պատճօններու մէջ գտնուած է ցարդ , 8. Ռեսուցչական վկայագիր առած է , ի՞նչ նիւղերու համար և ի՞նչ ասիականի , 9. Հասցէ , 10. Թուական և Ստորագրութիւն :

Այս հարցումները պատուականոյ սպեալ բուղթ մը , Կենսագրական Տեղեկագիր , կը դրկուի արձանա-

գրուիլ փափաֆողներուն, որոնք հարցումներուն պատասխանելով կը վերադարձրնեն Գործակալութեան :

**Ծան .** — Գաւառացի Ուսուցիչները պարտին այս տեղեկութեանց հետ յրկել 20 դահեկանի փութայի փուլ՝ նամակի եւ ի հարկին հեռագրի ծախքերուն համար :

Իսկ անձամբ ներկայացողները կը վճարեն միայն 5 դահ. արձանագրութեան վարձ :

 Գործակալութիւնը ի դիւրութիւն հասարակութեան, պէտք ունեցողներուն կ'առաջարկէ եւ պաշտօնի կը դնէ նաեւ Գրագիրներ, Գործակատարներ, Հաշուակալներ, Հաւաքիչներ եւ այլ այս կարգի պաշտօնեաներ՝ որոնցմէ կանխաւ երաշխաւորութիւն կ'առնուի, պաշտօնին պահանջած կերպով :

---

### Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ր (\*)

Գործակալութիւնը, իր աշխատութեանց փոխարէն, պաշտօնի յրկուելիք անձերէն կանխիկ կը ստանայ յանձնարարողչէ՛ք՝ անոնց մէկ ամսականին հաւասար գումար մը :

Այս հանակէն կրնայ զեղչ ըլլալ՝ ընտրելիին նիւթական կարողութեան համեմատ :

Պաշտօնեայ ուզող Թաղ. Խորհուրդներէ եւ Հոգաբարձութիւններէ ո՛ր եւ է վարձք չի պահանջուիր :

Սակայն մասնաւոր անձերու առաջարկուած պաշտօնեաներուն համար որոշեալ ամսականին կէսը պաշտօնեան կը վճարէ եւ կէսն ալ պաշտօնեայ ուզող անձը :

---

(\*) Տե՛ս Բիւրակն, 1900, Թիւ 41, Վարչական Խորագրով հատուածը :

## 4. ԵՒ 5. ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԵՒ ՏՊԱԳՐ.

### Գ Ո Ր Ծ Ե Ր

Գործակալութիւնը կը ստանձնէ ուրիշ Հեղինակներու պատրաստած գրքերը, մանաւանդ դասագրքերը հրատարակել՝ Մէարիժէն վաւերացման, սպագրութեան, փորձերու սրբագրութեան, կազմի եւ այլ աշխատութիւնները կատարելով :

Ի դիւրութիւն անոնց որ մտադիր են ո՛ր եւ է գրքի հրատարակութիւնն ընել, ստորեւ ցոյց կուտանք ինչ ինչ միջոցներ ու պայմաններ որոնց գործադրութիւնն անհրաժեշտ է .

1. Տպուելիք գրքին ձեռագիրը **ԵՐԿՈՒ ՅՐԻՆԱԿ** գրուելով մեզի ղրկուելու է, ( վաւերացման համար Մէարիժին ներկայացուած ձեռագիրներն ըստ օրինի *երկու օրինակ* ըլլալու են : )

2. Ձեռագիրը *սեւնեշե վերջը* միայն կրնանք որոշել՝

Թէ գիրքը ինչ դիրքով ու ծառայով եւ քանի՞ ժողովա կրնայ ըլլալ :

Թէ ո՞րչափ գումարի կրնայ հասնիլ անոր սպագրութեան, թղթին, կազմին, սրբագրութեան եւ յարակից աշխատութեանց ծախսը :

Թէ ո՛րքան օրինակ պէ՛տ է եւ կրնայ տպուիլ :

Թէ Դասութեան Գործակալութիւնը կը ստանձնէ՞ նոգալ գրքին ծախսը եւ *իր հաշուին* կատարել սպագրութիւնը :

Թէ այս պարագային ի՞նչ իրաւունք կը վերապահէ գրքին տիրոջը կամ հեղինակին :

Այս ամէն կէտերը կարելի չէ որոշել մինչեւ որ աչքի առջեւ չունենանք տպուելիք գիրքը :

Ձեռագիրը չդրկած՝ այս պայմաններու մասին  
նամակով մեզի հարցուններ ուղղել աւելորդ ժա-  
մախանառուքիւն ու յոգնուքիւն պիտի չլլար, ո-  
րոնց պէտք չթողելու համար է որ այս տեղեկութիւն-  
ները կը յանձնենք մեծարոյ հեղինակներուն ուշա-  
դուրեան, որպէս զի գիտակցաբար համակերպին  
վերոյիշեալ առաջին պայմանին, եւ երկու օրինակ  
ձեռագիրները սպասկովագրուած դրկեն մեր հասցէին:

3. Իսկ, անոնք որ կ'ուզեն իրենց հաշուին կա-  
սարել գրքին հրատարակութիւնը, պէտք է հոգան  
ծախքերը, նշան թէ ի՛նչ դիրքով ու քողով, ի՛նչ քա-  
նակութեամբ ու կազմով կ'ուզեն հրատարակել իրենց  
գիրքը: Այս պարագային ալ, ծախքին քանակու-  
թիւնը որոշելու համար, դարձեալ անհրաժեշտ է որ  
տեսնենք ձեռագիրը եւ լոս այնմ ցոյց տանք մօտաւոր  
հաշիւը:

Նոյնպէս, կը կատարուին սպագրական ամեն  
գործեր՝ այցեսմա, քննաքերական, նամակագլուխ-  
ազդեր, դպրոցական բարենիւթ, պատուանիւթ, վկայ-  
ագիր, վիճակացոյց, եւ այլն » .

## ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՆԱՄԱԿՆԵՐ

Մեզի հետ գործի վերաբերեալ Թղթակցութիւնը  
նոյն անձերէ կը խնդրենք խնայել մեր ժամանակին,  
ասոր համար կ'առաջարկենք

1. Նամակները գրել ընթեռնլի գրով, յառակ ոճով  
և կարճ՝ շատ կարճ, միայն կարեւոր կէտերը, ա-  
ռանց աւելորդաբանութեան .

2. Նիւթերը զատել Թիւերով .

Ասով կարելի է զգուշանալ շփոթութիւններէ , յա-  
պաղումէ և ժամանակի կորուստէ :

Գործակալութեան վերաբերեալ նամակ , դրամ և շն.  
դրկելու է առ Սմբատ Դաւթեան ,

Խորասանձեան խան, Սիրքէձի

استامبولده سرکه جیده خوراسانجیان خاندہ داودیان

SIMBAT DAVIDIAN

Horassandjian han, Sirkédji

STAMBOUL



### Ա Յ Լ Ե Ի Ա Յ Լ Գ Ր Ք Ե Ր

Առաջնորդ Թարգմ. Գաղ. - Հայ. Խ. Սիսճեան	4
Առաջնորդ Թարգմ. » - Տանկ. »	5
Ասորա (Քարսէն Սիլվա) Թ. Թէրզեան	10
Գիցաբանութիւն Բ. Բարսեղեան , Ա. տիպ	5
Եղերերգութիւններ Ա. Համլաճեան, Ա. տիպ	2 20
Երախայրիք Բանաստեղծական Գ. Մ. Էօլմէզեան	7 20
Երգեր , Տաղեր , Եւայլն , Մ. Թուրեան	7
Ընթանեկան Թանգարան Ա. Գ. Մասեհեան	3
Թուաբանութիւն Տանկաճեան , Ա. տիպ	5
Թուաբանութիւն Ա. - Զ. մասեր Ա. Պոյաճեան	
Լինհարդ Եւ Գերսուդ Խ. Եպ. Ստեփանէ	5
Ծաղիկներ Անգղ. Գրականութ. Մ. Մինասեան	4
Կենսագր. Տօթ. Սերվիչէնի, Տօզթ. Թորգոմեան	8
Հանրահաշիւ Թազուրեան	25
Միւլթրան իւլ ուլում Բ. Փաշաեան , Ա. տիպ	6
Նոր Կապարան	5

Ներհանուցման Սէթեան	5
Ուսուլի Մուհաբէմէի հուզուզիյէ	8
Ուսումն Քրիստոնէական Ա. Վարժապետեան	2 20
Պատմութիւն Ընդհանուր Դ. Խաչկոնց Ա. տիպ	5
Պատմութիւն Ազգ. Զօլարքեան, Ե. տիպ	6
Սաղմոս Դարթի Խոշորագիր	6
Սուրբ Երկիր, Տրդատ Եպիսկ. Պալեանի	10
Վերելք յԱրարս Դ. Փափազեան	5
Տաղաչափութիւն Զօրանեան	5
Քեանի Տանդա Գանուննամէսի	2 20
Օնանու մեղքը Եղ. Մուրատեան, Բ. տիպ	10
Ֆրանսերէն Լեզու Մ. Խորթուճեան, Ա. տիպ	5
Algebre Pichot	10
Corresp. et Term. commerciales Ժ. Զօյուն	20
Gramm. du premier âge Larousse	5
Orthographe	10
Style	8
Grammaire Guérard	8



## ԴԱՍԸՆԹԱՅՔ ՀԱՅ ԼԵԶՈՒԻ

Ստորև ցոյց տրուած է թէ մէն մի շրջանի կամ տարիի մէջ ի՞նչ դասագրքեր գործածել պէտք է Հայ Լեզուի համար, ըստ Կրթական Նոր Ծրագրի :

### ՀԱՅԱԽՕՍ ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՄԷՋ ԳՈՐԾԱԾԵԼԻ

- Ա. Տարի.** — Այրբենարան. — Փնջակէն ու Նուէրէն ոտանաւորներ :
- Բ. Տարի.** — Ընտելարան. — Փնջակ և Նուէր Հայ մանուկներուն :
- Գ. Տարի.** — Փունջ. — Ծաղկաբաղ. — Տարրական Քերականութիւն :
- Դ. Տարի.** — Գ. Վարժութիւն Մանկանց. — Լրացուցիչ Դասընթ. — Շարադրութիւն :
- Ե. Տարի.** — Բ. Փունջ. — Սկզբունք Համաձայնութեան և Շարադրասութեան :

### ՏԱՃԿԱԽՕՍ ԳԱՒԱՌՆԵՐՈՒ ՄԷՋ ԳՈՐԾԱԾԵԼԻ

- Ա. Տարի.** — Այրբենարան, և Փնջակէն ու Նուէրէն բերանացի ուսում :
- Բ. Տարի.** — Ա. Վարժութիւն Մանկանց և Ընտելարան :
- Գ. Տարի.** — Բ. Վարժութիւն Մանկանց. — Փունջ. — Տարրական Քերականութիւն :
- Դ. Տարի.** — Գ. Վարժութիւն Մանկանց. — Ծաղկաբաղ. — Լրացուցիչ. — Շարադր.
- Ե. Տարի.** — Բ. Փունջ. — Շարադրութիւն. — Սկզբունք Համաձայնութեան և Շարադրասութեան :

**Ծան.** Իսկ «ՆՈՐ ԴՊՐՈՅ» ի Դասընթացքը կըրնայ գործածուիլ Գ. Գ. Ե. Տարիներուն համար, աշակերտներու կարողութիւնն ի նկատ առնելով :



## ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԸ

— Ի՞նչ է երջանկութեան պայմանը, մարդ ինչո՞վ երջանիկ կ'ըլլայ : — Ահա հարցում մը որուն կրնար շատ տեսակ պատասխաններ տալ :

— «Հարատուծի՛ւնը», պիտի պատասխանէք . — այս է ընդհանրապէս տիրող կարծիքը :

Սակայն , երջանկութիւնը բոլորովին տարբեր բան է : Իրաւ , դրամը առաւելութիւններ ունի , ապա թէ ոչ՝ մարդիկ այնքան չէին տանջեր, իրենք զիրենք դրամ շահելու համար : Բայց հարատուծիւնը երջանկութիւն չէ իսկապէս :


Երջանկութեան ճշմարիտ աղբիւրն է Աշխատու-  
թիւնը :


Աշխատիլ կարենալու համար առողջ պէտք է ըլլայ , և առողջութիւնն առաջին պայմանն է երջանկութեան , եթէ իրաւցընէ կայ վիճակ մը , որուն երջանկութիւն ըսել արժէ : Եւ յետոյ , Աշխատութիւնն այն միակ բանն է որով մարդ չի ձանձրանար , և կերելի թէ , Չանձրոյթն հակառակն է երջանկութեան :

Ռեքեմն աշխատի՛ւնք , եւ մանաւանդ ուրիշներուն օգտակա՛ր կերպով աշխատինք :

Ապրիլն անհրաժեշտ չէ , բայց աշխատիլն անհրաժեշտ է :

Ա. Գ.




 Դարձեալս Գործակաշուքի-  
 նը միակ կեդրոնացեղին է Ուսումն.  
 Խորհուրդի Կրթական Օրագրին հա-  
 մեմաս յօրհնուած դասագիրքերուն :



Այս Գրացուցակը կը ջնջէ  
 նախորդները :

---

معارف نظارت جلیله سنک فی • نیسان سنه ۳۱۷ تاریخلو  
 و ۳۹۹ نمره لی رخصتنامه صیله طبع اولمشدر



